

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

ԺԷ-ԺԸ ԴԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ¹

Ազատ Բոգոյան

Պատմական գիտությունների դոկտոր

Հունաստանը դարեր շարունակ ուղեկցել է Հայոց պատմությանը և մշակույթին: Այս հանգամանքը իր ազդեցությունն է թողել հայկական մտածողության բազմազան շերտերի վրա: Այստեղ փորձենք հայոց պատմության քառուղիներում պարբերացնել մշակութային այն հիմնական խաչաձևումները, որոնք իրենց ազդեցությունն են թողել հայկական պատկերացումների վրա: Հնագիտական, պատմական, բանասիրական եւ լեզվաբանական հետազոտությունները հիմք կծառայեն մեր նկատառումների համար, որոնք ձևավորվել են մեր հայագիտական պրպտումների արդյունքում: Հայոց մշակույթն իր ողջ պատմության ընթացքում սովորել, թարգմանել և փորձել է յուրացնել հունական մշակույթից ժառանգած արժեքները: Այդ երեւույթն իր ազդեցությունն է թողել ԺԷ-ԺԸ դդ. հայկական պատկերացումների վրա, որոնք երբեմն ուղիղ համեմատական են Հայաստանի մասին հունական պատկերացումներին:

Հայաստանը Առաջավոր Ասիայի Հյուսիս-արևմուտքում գտնվող երկրներից է, որի մասին նախնական տեղեկություններ է հաղորդում մ.թ.ա. Ե-Դ դարերի հունական պատմագրությունը (Հերոդոտես, Քսենոֆոն): Պատմության այս շրջանում Հունաստանի մասին պատկերացումները Հայաստանում հավանաբար սահմանափակվում էին հունական բանակի մասին հիշողություններով, որոնք, ականատես Քսենոֆոնի ղեկավարությամբ, անցնում էին հայկական լեռնաշխարհի արևմտյան տարածքներով:

Հայաստանի և Հունաստանի փոխադարձ ավելի լայն ճանաչումը համընկնում է հելլենիզմի դարաշրջանի հետ, երբ Հայաստանը հայտնվում է արևելյան մշակույթների հետ շաղախված հունական մշակութային աշխարհի ազդեցության գոտում: Այս դարաշրջանը ամենաերկարատևներից է Հայոց մշակույթի պատմության մեջ: Այն նաև ամենահիշարժաններից է Հայոց պատմության հետազոտողների հա-

¹ Հրատարակվող գեկուցումը անգլերեն լեզվով ընթերցվել է «Հունաստանի պատկերը ժողովուրդների հայելում (17 – 20-րդ դդ.)»[Das Bild Griechenlands im Spiegel der Völker (17. – 20. Jh.)] միջազգային գիտաժողովում, որը տեղի է ունեցել 2007 թ. դեկտեմբերի 2-6-ը Աթենքում: Զեկուցման անգլերեն բնագիրը հրատարակվել է Das bild Griechlands im Spiegel der Völker (17. bis 20. Jahrhundert)/ Herausgegeben von Evangelos Konstantinou, Leter Lang: Frankfurt am Main. Berlin.Bern.Bruxelles.New York.Oxford.Wien, 2008, S. 15-19 ժողովածոյում:

մար, քանի որ այս շրջանում է Հայաստանը գրել իր պատմության փառավոր էջերից շատերը: Հելլենիզմի ազդեցությունը առկա է պատմամշակութային հուշարձանների, կրթության համակարգի վրա: Այս ժամանակներից է հասել վկայությունն այն մասին, որ Հայաստանի արքա Արտավազդը հունարեն լեզվով գրել է ողբերգություններ և բեմադրել է դրանք Արտաշատի թատրոնում: Արտավազդի կողմից Եվրիպիդեսի ողբերգություններից մեկի բեմականացման հիշատակությունը պահպանել է իր «Ջուգակչիոք»-ում Պլուտարքոսը: Այս դարաշրջանում Հայաստանում գրվել են մի շարք հունական արձանագրություններ:

Հելլենիզմին փոխարինած հռոմեական նվաճումները ևս կարելի է դիտել իբրև հելլենիզմի շարունակություն, կամ նրա միջոցով հռոմեական տիրապետության հաստատում: Բանն այն է, որ հռոմեական տիրապետության շրջանում էլ կայսրության կողմից պարտադրվող լեզուն մնում էր հունարենը, որը մրցակցում էր Պարսկաստանի կողմից պարտադրվող պարսկերեն և արամեերեն (ասորերեն) լեզուներին: Ահա լեզվական այս երկու միջավայրերի հետ է կապում հայագիտությունը քրիստոնեության ընդունումը Հայաստանում, այդպիսով նախանշելով Աստծո խոսքի ներդրման երկու ճանապարհ:

Այս վիճակը հավանաբար շարունակվել է մինչև Ե դարի սկիզբը, երբ ազգային մշակույթի քրիստոնեություն ընդունած նվիրյալների մեծ պոռթկումով ստեղծվեց Հայոց աթոռները և դրա հիմքի վրա ձևավորվեց հայկական մատենագրությունը: Այդ աստեղային ժամից ի վեր, հունական մշակութային հուշարձաններով հարստացվում է հայ մատենագրությունը, որ ակնածանքի մեծ զգացում ուներ և Գիտությունների Մայր էր անվանում Հունաստանը, նրա հոմանիշ դարձած Աթենքն ու ողջ հունալեզու մատենագրությունը, որը ստեղծվում էր Արևելահռոմեական կայսրության բոլոր հունախոս քրիստոնեական համայնքների ջանքերով: Այս մտածողությունն իր դասական դրսևորումներով արտացոլված է Մովսես Խորենացու *Հայոց պատմության* մեջ, որն էլ մեծ ազդեցություն է գործել հետագայի հայ մատենագրության վրա²:

Այնուհետև, ողջ քրիստոնյա հայ հասարակությունը ամբողջ միջնադարի ընթացքում աստիճանաբար մտասևեռվեց դեպի Կոստանդնուպոլիս, Երուսաղեմ և Ալեքսանդրիա, որոնք դարձել էին հունական մշակույթի փարոսները Հայաստանի համար: Այստեղից են մշակութային սնունդ փորձում հայթայթել հայ գործիչները հայրենի մատենագրությունը հարստացնելու համար: Հունարենից հայերեն են թարգմանվում ճարտասանության և քերականության դասագրքեր (Աֆթոնիոս, Դիոնիսոս Թրակիացի), պատմության (Եվսեբիոս Կեսարացի, Սոկրատ Սքոլաստիտոս) և աշխարհագրության ձեռնարկներ (Պտղոմեոս), փիլիսոփայական (Արիստոտել,

² Տե՛ս Ա.Թովյան, *Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը*, Երևան, 2001, էջ 8-9:

Պլատոն) և մեկնողական տրակտատներ (Իրենիոս, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիազանցի), և այլ ժանրերի երկեր³:

Քաղկեդոնի եկեղեցական ժողովից հետո թվում է, թե Հայաստանը դուրս պիտի մղվեր հունական մշակույթի ծիրից: Սակայն նման երևույթը բացառվում էր երկու հանգամանքի առկայությամբ. նախ՝ Պարսկաստանի, իսկ հետագայում նաև՝ Արաբական խալիֆաթի տիրապետությամբ քրիստոնյա Հայաստանը հաճախ նեցուկ էր փնտրում Բյուզանդական կայսրությունում, երկրորդ՝ Հայաստանում առաջացել էր քաղկեդոնական հայերի մի հոծ համայնք, որը Հայոց եկեղեցուց իր ինքնուրույն դիրքը պաշտպանելու հավակնությամբ սկզբում կառչել էր Կ.Պոլսի բյուզանդական եկեղեցուն, իսկ հետագայում հետզհետե ձուլվեց վրացական եկեղեցական կառույցի մեջ: Քաղկեդոնական հայերի այս գանգվածը ավելի էր ամրացնում իր կապերը Բյուզանդական մատենագրության հետ, թարգմանում էր բյուզանդական եկեղեցու ծիսական գրքերը (մարտիրոսոգ, աղոթագիրք, կանոնագիրք և այլն)⁴:

Բյուզանդական ազդեցությունը Հայոց մշակույթի վրա ավելի ինտենսիվ դարձավ հայկական ծագումով Մակեդոնական դինաստիայի կայսրերի ձեռնարկած «ռեկոնկիստայով», որով փորձ կատարվեց միախառնել Փոքր Ասիայի բյուզանդական կայսրության ազգաբնակչության հետ հայկական զինվորական ջոկատները, որոնք հաստատվեցին Բալկանների և Մերձավոր Արևելքի տարածքների վրա: Այս ժամանակաշրջանում հայ-բյուզանդական փոխհարաբերությունները տեղափոխվեցին պետական փոխհարաբերությունների մակարդակի վրա: Սակայն կայսրությունն ամեն գնով փորձեց խարխլել հայոց Բագրատունիների ստեղծած պետականության հիմքերը՝ մասնատելով երկրի միասնականությունը⁵: Նման քայլերով կայսրությունը փորձում էր իր թշնամիների դեմ պատերազմներում օգտագործել հայկական զինվորական ուժերը: Համանման պրակտիկա ի հարկե գործում էր նաև դրանից առաջ, երբ Մորիկ կայսրը Պարսից Սասանյան արքա Խոսրովին խորհուրդ էր տալիս հայ ազգաբնակչությանն իբրև զինուժ օգտագործել Պարսկաստանի արևելքում տեղի ունեցող պատերազմներում, ինչպես բյուզանդացիներն են նրանց օգտագործում Բալկաններում տեղի ունեցող պատերազմներում: Նման քաղաքականությունը հետապնդում էր երկու նպատակ. նախ՝ թուլացնել իրենց պետությունների սահմանային գոտում ապրող Հայաստանը, իսկ պատերազմներում՝ հայերի օգնությամբ կանգնեցնել թշնամիների առաջխաղացումը:

Հայոց պատմության և մշակույթի մեջ մեծ տեղ է զբաղեցնում նաև Կիլիկիան, ուր հայերը ԺԲ դարում ստեղծեցին պետականություն: Գաղտնիք չէ, որ Կիլիկիան անտիկ շրջանի Հունաստանի առասպելաբանության մեջ ունի իր ուրույն տե-

³ Տե՛ս Լ.Տեր-Պետրոսյան, *Հայ հին թարգմանական գրականություն*, Եր. 1984:

⁴ Տե՛ս Ն. Ալիսեան, *Միմեոն Պղնձահանեցի և իր թարգանությունները վրացերենէ*, Վիեննա, 1951, էջ 189-195:

⁵ Տե՛ս Կ.Կ. Юзбашян, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, Москва, 1988:

ղը: Այս տարածաշրջանի հետ են կապված Զևսի և Տիփոնի, Բելերոփոնի և Հերակլեսի, Ամազոնուհիների և Իոյի, Կիլիքսի և Եվրոպայի և այլ առասպելներ: Ահա այս տարածաշրջանում Հայկական զինվորական ջոկատներն ու Հայաստանից դուրս եկած ազնվականությունը հիմնեց մի պետականություն, որը գոյատևեց մինչև ԺԴ դարի կեսերը: Այդ պետականությունը քաղաքական կապեր էր հաստատել Բյուզանդական կայսրության հետ: ԺԲ դարի քաղաքական բախումները բյուզանդական կայսրության հետ, բանավեճերը երկու երկրների եկեղեցական կազմակերպությունների միջև և՛ մոտեցնում էին, և՛ իրարից հեռացնում այդ երկրների հասարակությունները: ԺԲ դարի վերջից, Բյուզանդական կայսրության թուլացման հետ միասին իրար էին հաջորդում դիվանագիտական այցելությունները Սսից դեպի Կոստանդնուպոլիս և նորաստեղծ Նիկիական կայսրություն, և ընդհակառակն: Կողմերը հույս ունեին թյուրքական քաղաքական նվաճումներին հակադրել Կիլիկյան Հայաստանի հետ դաշնակցային փոխհարաբերությունները:

Այս ժամանակաշրջանին է բաժին ընկնում հունարենից կատարված թարգմանությունների մի ողջ գրադարան, որի մեջ աչքի են ընկնում բյուզանդական օրենսդրական երկերի, վարքերի, ճառերի, մեկնությունների թարգմանությունները⁶: Այս ժամանակներում հունական դասական դպրոցների զարգացման նկատառումներով նորովի է զարգանում ուսումնական կյանքը երկրում: Այս շրջանի հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների բնագրերը և երկու կողմերի միմյանց նկատմամբ մշակած վերաբերմունքը դեռևս այս երկու եկեղեցիներին կուղեկցի մինչև ԺԸ դար: Բյուզանդական շրջանի բազմաթիվ որակումներ դեռևս երկու ժողովուրդների պատմության տարբեր շրջաններում գլուխ կբարձրացնեն: Հույները Հայոց եկեղեցին կղիտեն իբրև սխիզմատիկ եկեղեցի, հայերը առօրյա խոսակցական լեզվում կունենան բազմաթիվ բացասական որակումներ:

Բյուզանդական կայսրության անկման հետ միասին հայկական համայնքը ձգտում էր ձեռք բերել նույնատիպ արտոնություններ, ինչ Օսմանյան կայսրության մեջ ունեին հույները: Այս ձգտումը ճարակորեն փորձեց օգտագործել Օսմանյան սուլթանությունը: Կոստանդնուպոլսի առումից անմիջապես հետո, Բարձր Դուռը քայլեր ձեռնարկեց Կ.Պոլսում ստեղծել Հայոց եկեղեցու պատրիարքություն: Նման քաղաքական քայլը ուներ երկու նպատակ. նախ հավաստվում էր, որ Բարձր Դուռը ճանաչում է Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը, որը դարեր շարունակ մերժվել էր Բյուզանդական կայսրության կողմից, ապա, հավասարեցնելով հունական և հայկական պատրիարքությունների կարգավիճակները՝ նվազեցվում էր հունական պատրիարքության դերը երկրի կառավարման գործում: Դա նշանակում էր Օսմանյան կայսրու-

⁶ Տես Ն. Ալիյան, *Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տաթևի, կենսն և գրական վասարակները հանդերձ ազգաբանությամբ Պաշխաունեաց և Լամբրոնի Հեթմեանց*, Վիեննա, 1956, էջ 244-315:

թյան մեջ Հունական (երբեմնի Բյուզանդական) եկեղեցուն հատկացնել շարքային դեր երկրի կառավարման գործում: Այս միտումով սուլթանական կառավարությունները փորձում էին ամեն կերպ խորացնել անհանդուրժողականությունը երկու համայնքների ներսում: Դրա համար հաճախ գործիք էին դառնում երկու հանրությունների ներկայացուցիչներն էլ: Ժամանակի ընթացքում հայկական և հունական համայնքների թշամանքը չմարեց⁷: Օսմանյան կայսրության մեջ երկու ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը ևս թողել է իր ազդեցությունը այդ ժողովուրդների փոխհարաբերությունների վրա: Իհարկե, ինչպես վերևում շեշտեցինք, այս երկու քրիստոնյա ժողովուրդների փոխհարաբերությունների վրա շարունակել են խոր ազդեցություն թողնել նաև միջնադարյան պատկերացումները:

Հայաստանի համար կարևորագույն նշանակություն են ձեռք բերում Բյուզանդական կայսրության կործանման հանգամանքները: Այս խնդիրներին անդրադարձել են ԺԶ-ԺԷ դարերի մի շարք ողբասացներ, որոնց հիմնական խնդիրն է եղել ներկայացնել Կոստանդնուպոլսի անկման հանգամանքները⁸: Կոստանդնուպոլսի անկման առեղծվածի մասին հայ ընթերցողին ավելի մանրամասն տեղեկություններ տալու միտումով, ԺԷ դարում հայերեն է թարգմանվում *Գերգի Սֆրանձեսի* վերագրված ընդարձակ ժամանակագրությունը⁹: Ուշ միջնադարյան հայկական մատենագրության մեջ հույներն ու Հունաստանը հիշատակվում են «հոռոմոց երկիր» տերմինով: Նրա սահմանները հայ մատենագիրների կողմից հասցվում են մինչև Մեքսստիա աշխարհագրական միավոր, ինչը խոսում է Հունաստանը բուն Հայաստանին սահմանակից տեսնելու՝ հայ մատենագիրների ցանկության և ձգտման մասին:

Դեռ ԺԶ-ԺԷ դարերից, Հայաստանի ազատագրության ռաիվիրաները իրենց ազատագրական ծրագրերը փորձում էին համապատասխանեցնել հունական ազատագրական շարժման բռնած դիրքորոշումների հետ: Այս տեսանկյունից կարևոր փորձաքար էր դարձել Կանդիական պատերազմը, ուր Հայաստանի ազատագրության գաղափարներով սնված հոգևոր և աշխարհիկ գործիչները փորձում էին համագործակցության եզրեր գտնել Հունաստանի համապատասխան շրջանների հետ: Այդ համագործակցությանը նպաստում էին նաև Եվրոպայի քաղաքական գործիչները, որոնք ցանկանում էին եվրոպական զանազան քաղաքական խարդավանքների մեջ ներքաշել Օսմանյան կայսրության մեջ փոքրամասնություն կազմող այդ ժողովուրդներին¹⁰:

⁷ Տե՛ս Յ.Ճ.Սիրունի, *Պոլիս և իր դերը, Առաջին հարյուր Մ1453-1800*^թ, Պեյրուք, 1965, էջ 207-357:

⁸ Տե՛ս Հ. Անապյան, *Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին*, Եր. 1957, էջ 5-9:

⁹ Տե՛ս Հ.Անասեան, *Գերգ Տրանցեսի Քրոնիկոնի հայերէն անտիպ թարգմանութիւնը*. – Նոյնի, *Մանր երկեր*, Լոս Անջելես, էջ 441-448, հմմտ. Георгий Сфрандзи, Хроника. / Предисловие, перевод и примечания Е.Д. Джагацпаян. – Кавказ и Византия, вып. 5, Ер. 1987, с.156-157:

¹⁰ Հ.Անապյան, *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում*, Եր. 1961:

ԺԷ-ԺԸ դարերի հայ մատենագրության համար հայ-հունական փոխհարաբերությունների պատմությունը հետազոտելու տեսանկյունից մեծ կարևորություն ունի *Կեղծ Մֆրասնձեսի* հայերեն թարգմանությունը: Այդ երկի ընկալման տեսանկյուններից բավական մեծ կախում ունի պատկերացումների այն ամբողջությունը, որը խթանել է հատկապես այս երկի թարգմանությունը: Ավելի ուշ շրջանում հայ-հունական մերձեցումների պատմությունն արտահայտվում է հայ պարբերական մամուլում, հատկապես Եվրոպայում հրապարակվող պարբերականներում, ուր արտացոլված է հունական հասարակության պայքարն ազգային ազատագրության համար: Այս առումով հատկանշական է, որ հունական ազատագրական շարժման կարևորագույն մասնակիցներից ու ականատեսներից մեկը՝ բանաստեղծ լորդ Բայրոնը, Արևելքով հրապուրված, երկար ժամանակ անցկացրել է Վենետիկի Միսիթարյան միաբանության կամարների տակ:

Հատկապես մեծ է ԺԹ դարում, հայոց մշակութային զարթոնքի հետ կապված, մտավորական շրջաններում Հունաստանի մասին պատկերացումների ընդլայնումը: Այստեղ իրենց նշանակությամբ կարևորվում են Վենետիկի և Վիեննայի Միսիթարյանների հրապարակումները: Հույների մասին հայկական պատկերացումների ընդլայնմանը չէին կարող չնպաստել աշխարհի տարբեր կենտրոններում հայերենով գրված բազմաթիվ դասագրքերը, մշակույթի պատմությանը նվիրված երկերը: Սակայն այստեղ, այնուամենայնիվ, կարևոր տեղ է զբաղեցնում գեղարվեստական գրականությունը: Չկա ԺԹ դարի հայոց պատմավիպասանության մի օրինակ, ուր հիշատակված չլինեն հույները կամ բյուզանդացիները: Այստեղ նրանք գնահատվում են Բյուզանդական կայսրության որդեգրած մոտեցումների քննադատության տեսանկյունից: Այդ երկերում հույները հաճախ բնութագրվում են «խարդախ», «կեղծ» և նման այլ էպիտետներով:

ԺԹ դ. սկզբի Հունաստանի ազգային ազատագրական պայքարին անդրադարձել են Զմյուռնահայ պարբերականները: Դրանցից մեկը՝ «Մետեորը», որը հրապարակվել է 1880-1883 թթ., լույս է ընծայել հույն հեղինակ Էմմենիցի պատմական ակնարկը ԺԹ դարի սկզբի հունական ազատագրական շարժման հերոսներից մեկի՝ Ֆոթոս Յավելասի մասին, որը 1803 թ. ղեկավարել է օսմանյան հրոսակների դեմ պայքարող Սուլիի ազգային-ազատագրական պայքարը:

Հայ-հունական բազմադարյան կապերն ու համակեցությունը ծնունդ են տվել երկու ժողովուրդների քաղաքական որոշ պատկերացումների նույնությանը ժամանակակից աշխարհում: Այդ պատճառով, հաճախ ժամանակակից քաղաքական ֆորումներում Հունաստանն ու Հայաստանը համատեղ հանդես են գալիս իրենց պատմական խնդիրներով: Ղարաբաղյան հարցում Հայաստանի մոտ դաշնակիցներից մեկն է համարվում Հունաստանը, իսկ Կիպրոսի կրճիմի լուծման գործում հայ դիվանագիտությունը միշտ առաջարկում է իր միակամությունը Հունաստանի հետ:

Ամփոփում

THE IMAGE OF GREECE IN THE ARMENIAN VISIONS OF THE 17-19TH CENTURIES

Azat Bozoyan

Doctor of Sciences in History

Greece has accompanied the Armenian history and culture for centuries. It has left its influence on numerous layers of the Armenian mentality. Let us try to arrange all the phenomena of the cultural history, which have their influence on the Armenian conception of the 17th and 19th centuries. Archaeological, historical-philological and linguistic works and studies will serve as material for the research of conceptions, which have centuries-old basis and are compared to present way of thinking.

ОБРАЗ ГРЕЦИИ В АРМЯНСКОМ МИРОВЕДЕНИИ 17-19 ВЕКОВ

Азат Бозоян

Доктор исторических наук

В течении веков Греция имела свое неосредственное влияние на историю Армении и ее культурное наследие. Это обстоятельство сыграло свою роль на формирование менталитета разных социальных слоев армянского общества. В нашей статье мы попробывали восстановить некоторые аспекты армяно-греческого культурного взаимовлиянии на протяжении 17 – 19-х веков.